



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ԴԱՄԿԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԵԼԻՔ, ՆՈՐԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄ

ՀՊՏՀ 25-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ

Ն Յ ՈՒ Թ Ե Ր

(2015 թ. նոյեմբերի 11-13)

I

ԵՐԵՎԱՆ
ՏՆՏԵՍԱԳԵՏ
2015

ՀՏԴ 001.89:06
ԳՄԴ 72
Գ 606

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

Կորյուն Աթոյան

ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝ տ.գ.դ., պրոֆ. Հ. Աղաջանյան, տ.գ.դ., պրոֆ. Ս. Ավետիսյան, տ.գ.դ., պրոֆ. Ա. Ասլանյան, տ.գ.դ., պրոֆ. Ս. Գևորգյան, տ.գ.դ., դոց. Լ. Գրիգորյան, տ.գ.թ., դոց. Կ. Հակոբյան, տ.գ.դ., պրոֆ. Ա. Թավադյան, տ.գ.դ., պրոֆ. Ա. Չաքարյան, տ.գ.դ., պրոֆ. Գ. Կիրակոսյան, տ.գ.դ., պրոֆ. Ա. Մաթևոսյան, փ.գ.դ., պրոֆ. Վ. Միրզոյան, տ.գ.թ., դոցենտ Խ. Մխիթարյան, տ.գ.թ., դոցենտ Գ. Նազարյան, տ.գ.թ., դոցենտ Ս. Չալաբյան, տ.գ.դ., պրոֆ. Վ. Սարգսյան, տ.գ.թ., դոց. Ա. Սարգսյան, տ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. Յու. Սուվարյան, տ.գ.թ., պրոֆ. Ի. Տիգրանյան, տ.գ.դ., պրոֆ. Գ. Վարդանյան

ԳԻՏԵԼԻՔ, ՆՈՐԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր, Գ 606 I / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2015, 628 էջ:

ՀՏԴ 001.89: 06
ԳՄԴ 72

ISBN 978-9939-61-135-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2015 թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և անձամբ իմ անունից ողջունում եմ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 25-րդ գիտաժողովի կազմակերպիչներին և բոլոր մասնակիցներին:

21-րդ դարում տնտեսական զարգացման հիմքը գիտելիքը, նորամուծությունները և ստեղծագործական ներուժն են: Ուստի պատահական չէ գիտաժողովի՝ «Գիտելիք,

նորաստեղծություն և զարգացում» խորագրի ընտրությունը:

Ես քաջատեղյակ եմ համալսարանում իրականացվող հետազոտություններից և գոհունակությունս եմ հայտնում, որ Հայաստանի Հանրապետության Կառավարության տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակներում սահմանված գերակայությունները համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի, ասպիրանտների և ուսանողների ուշադրության կենտրոնում են:

Ուրախալի է, որ դեռևս 2011 թ. ՀՊՏՀ գիտխորհրդի կողմից հաստատված՝ 2011-2017 թթ. գիտահետազոտական և նորարարական զարգացման հայեցակարգում սահմանված նպատակները աստիճանաբար կյանքի են կոչվում: Շարունակվում են գիտական գործունեության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման աշխատանքները, ինչի վկայությունն են նաև «Ամբերդ» հետազոտական կենտրոնը և մոտ ժամանակներս ստեղծվելիք գիտաուսումնական լաբորատորիաները:

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը առաջնորդվում է տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման, շարունակական տնտեսական աճի ապահովման հրամայականներով և գիտելիքահենք տնտեսություն կառուցելու անհրաժեշտությամբ:

Վերջին շրջանում մենք զգալի առաջընթաց ենք արձանագրել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բնագավառում. յուրաքանչյուր տարի, միջին հաշվով, գրանցվում է 25% աճ: Այս ամենի արդյունքում ներկայում ունենք համապատասխան ներուժ և բոլոր անհրաժեշտ նախադրյալները տարածաշրջանում կարևոր դերակատար դառնալու համար:

Մենք հետևողական ջանքեր ենք գործադրում նորաստեղծական էկոհամակարգի զարգացման նպատակով: Մասնավորապես, իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են նորարարության բնագավառի իրավական դաշտի կատարելագործմանը, ժամանակակից համապատասխան կառույցների ձևավորմանն ու զարգացմանը, ոլորտի առաջընթացը խթանող ֆինանսական ենթակառուցվածքների՝ հետազոտական, կրթական կենտրոնների, տեխնոպարկերի, լաբորատորիաների ստեղծմանը, ինչպես նաև առկա կարողությունների զարգացմանը: Մենք պատրաստ ենք աջակցելու նորարարական բոլոր այն ընկերություններին, որոնք ստեղծում են նոր ապրանքներ, ծառայություններ և շուկաներ:

Համալսարանական գիտությունը պետք է զարգանա առաջանցիկ տեմպերով՝ նախանշելով ու լուսավորելով երկրի զարգացման դժվարին ճանապարհը:

Համոզված եմ՝ շնորհիվ նաև այս ներկայացուցչական գիտաժողովի, հայրենական տնտեսագիտության ներկայացուցիչները և արտասահմանցի հետազոտողները, բոլոր մասնակիցները և նրանք, ովքեր կձանոթանան գիտաժողովի նյութերին, կձևավորեն սեփական պատկերացումները տնտեսագիտության և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառում գոյություն ունեցող հիմնախնդիրների, ինչպես նաև դրանց լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ



Այսօր մեկնարկում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» խորագրով 25-րդ գիտաժողովը, որը նպատակ ունի ոչ միայն վեր հանելու մեր գիտական ներուժը, այլև հավակնում է հանրությանը ներկայանալու որպես տնտեսագիտական հարցերի հետևողական ու համակողմանի քննարկման հարթակ:

Մեզ համար կարևոր ու առաջնային է սկզբունքային ու կառուցողական գաղափարներով, վերլուծություններով, անաչառ տեսակետներով հանդես գալը: ՀՀ Կառավարությունը մեզանից սպասելիքներ ունի, և մենք պետք է գիտակցենք մեր ներուժը դրսևորելու անհրաժեշտությունը, որպեսզի ի հայտ բերենք գիտական ու հետազոտական բարձր արդյունքներ՝ լուծելու երկրի առջև ծառայած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, նախանշելու զարգացման նոր ու իրատեսական հեռանկարներ:

Մեր գիտաժողովն իր շուրջն է համախմբել ոչ միայն հայրենական տնտեսագիտության անվանի ներկայացուցիչների, այլև երիտասարդ հետազոտողների, արտերկրի գիտնականների, որոնց հետ նպաստավոր միջավայրում կլսենք ու կքննարկենք գիտական բարձրարժեք զեկուցումներ, կուրվագծենք, կյանքի կկոչենք նոր ծրագրեր: Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ հանրապետության բոլոր տնտեսագետներին հրավիրել համատեղ ստեղծագործական աշխատանքի՝ մեր ջանքերը միավորելու տնտեսագիտական ծանրակշիռ արդյունք ստեղծելու ու ներկայացնելու գործում:

Հավատացած եմ, որ հայ տնտեսագետներն ի զորու են սատար կանգնելու հարազատ երկրի Կառավարությանը, նպաստելու տնտեսական կյանքի վերելքին: Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ, մաղթում եմ բոլորիս եռօրյա արգասաբեր աշխատանք, գիտաժողովի խորագրին ու նպատակին համարժեք ստեղծագործական ընթացք, որը մի նոր ձեռքբերում կամրագրի համալսարանական գիտության զարգացման ճանապարհին:



ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարար

Թույլ տվեք ակնածանքով և մեծագույն ոգևորությամբ ողջունել «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» խորագիրը կրող այս գիտաժողովը և բավարարվածություն հայտնել այն փաստի առիթով, որ մեզ համար այնքան հարգատ կրթօջախում հնարավորություն է ստեղծվել հարգարժան մասնագետների, պրոֆեսորադասախոսական կազմի և գործընկերների հետ քննարկելու թերևս ամենապահանջված, ամենախորքային և ամենահեռանկարային թեմաները: Ոգևորությունը կրկնակի է, որովհետև դատարկածեռն չենք այսօր, և պատիվ ունեն ձեզ ներկայացնելու ՀՀ էկոնոմիկայի նախարարության ուժերով մշակված «Հայաստանի կայուն տնտեսական զարգացման ռազմավարություն. ինովացիոն առաջընթացի ուղին» փաստաթղթի լրամշակված նախագիծը:

Նախագծի նախնական տարբերակը մեկ անգամ արդեն ներկայացվել է այս տարվա ամռանը՝ ՀՀ կառավարության կողմից կազմակերպված «Տնտեսական օրակարգ» համաժողովում: Այդ միջոցառման ընթացքում, ինչպես նաև դրան հաջորդած բազմաթիվ առանձնազրույցների և հանդիպումների շրջանակում ձեզանից շատերի հետ առիթ ենք ունեցել քննարկելու փաստաթղթի առանձին դրույթները կամ ընդհանուր գաղափարախոսական հիմքերը, որոնց վրա կառուցվել է փաստաթուղթը: Աշխատել ենք հաշվի առնել ներկայացված յուրաքանչյուր դիտարկում, որի համար շնորհակալություն եմ հայտնում:

Այսպիսով՝ ո՞րն է խնդիրը, ինչո՞ւ այսօր և ինչո՞ւ հատկապես նորաստեղծության առաջընթացի ճանապարհով ենք տեսնում մեր երկրի ու տնտեսության զարգացման հեռանկարը:

Դուք, իհարկե, քաջատեղյակ եք, որ տնտեսական զարգացման սահմանափակումների հաղթահարման ու աճի կայուն հիմքերի ապահովման նպատակով տնտեսագիտական ու քաղաքագիտական միտքն ու փորձը տասնամյակների ընթացքում բազմաթիվ մոտեցումներ են առաջարկել: Տնտեսական աճի տարբեր մոդելների միջոցով փորձում են բացատրել զարգացման հենքային գործոնները, սահմանները, ըստ տարբեր կանխադրույթների ու սցենարների ներկայացնել հայեցակարգեր ու սկզբունքներ, որոնք պետք է լինեն երկրների զարգացման քաղաքականության հիմքում: Երկրներն ու միջազգային կառույցներն արդեն տասնամյակներ շարունակ միասնական ջանքեր են ներդնում համընդհանուր աղքատության հաղթահարման ու եկամուտների միջև անհավասարության նվազեցման ուղղությամբ: Այդուհանդերձ, հիմնախնդիրն իր սրությամբ այսօր էլ մնում է միջազ-

գային հանրության ու երկրների քաղաքականության օրակարգի առաջնային մարտահրավերներից մեկը, որը միարժեքորեն ներառվում է միջազգային ու ազգային անվտանգության ու կայունության ապահովման համատեքստում:

Այսօր համաշխարհային տնտեսությունը և հատկապես զարգացած երկրները հետճգնաժամային վերականգնման շրջափուլում են: Տնտեսական ակտիվության տեմպերը խթանելու ջանքերն ուղեկցվում են սոցիալ-տնտեսական ու աշխարհաքաղաքական մարտահրավերներով: Տնտեսական աճի մի շարք ավանդական աղբյուրներ հետզհետե կորցնում են իրենց նշանակությունը: Ֆիզիկական կապիտալում կատարվող ներդրումները նվազող միտումներ են արձանագրում, ինչն էական դիսկ է հատկապես զարգացած երկրների երկարաժամկետ տնտեսական աճի համար: Աստիճանաբար մեծանում են մտավոր ակտիվներում ներդրումների ծավալները, որոնք սկզբունքային նախապայման են տեխնոլոգիական զարգացման համար:

Հայաստանի տնտեսական զարգացման պատմական սցենարն ու ներկա վարքագծային դրսևորումները պարզապես պարտադրում են որդեգրել աճի նոր գաղափարախոսություն՝ երկարաժամկետում կայուն զարգացման հենքային շարժիչներ ձևավորելու նպատակով:

Մինչ այսօր երկրի զարգացման հետագծի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զարգացող երկրից զարգացածին անցնելու համար միայն տնտեսական աճ ապահովելը բավարար չէ: Երկիրը դեռևս լիարժեքորեն չի իրացրել աճի հենքային գործոնների ներուժը՝ ներդրումների միջոցով ողջ տնտեսությունում արդյունավետության հորիզոնական և ուղղահայաց տարածման, արտաքին շուկաների միջոցով ցանցային ու ապրանքային արժեզրեաների ընդլայնման իմաստով, աշխատուժի միջոցով նոր որակի տնտեսություն կառուցելու համար առաջադեմ գիտելիքի ու կարողությունների խիստ սահմանափակ կլանման ու կիրառության առումներով: Այս իրողությունների համատեքստում զարգացման մոդելի վերագնահատումն ու վերանայումն անվիճարկելի հրամայական են:

Ի հավելումն նկատենք, որ մեր զարգացման տեսլականի շրջանակում որոշակի խումբ ներքին մարտահրավերներ անհրաժեշտ է լրջագույնս հասցեագրել՝ հաշվի առնելով դրանց համակարգային բնույթն ու հրատապությունը որպես զարգացման հենքային սահմանափակում:

Արտադրողականության մակարդակի բարձրացման մարտահրավերը: Մրցունակ տնտեսություն ձևավորելու նախապայմանն արտադրողականության աճն է ինչպես ճյուղերի, այնպես էլ ընկերությունների մակարդակով: Մակրոտնտեսական կայուն իրավիճակը, պետության աջակցող քաղաքականությունը, արտաքին առևտրի բարենպաստ պայմանները նպաստում են ընկերությունների մրցունակության ապահովմանը, եթե նրանց գործունեությունը հիմնված է բարձր արտադրողականության վրա: Ընկերության գործունեության ցանկացած խթան (հարկային, վարկային, լոգիստիկ) խիստ սահմանափակ է իր ազդեցությամբ կամ ժամանակի մեջ, եթե դա չի ուղեկցվում արտադրողականության և ճկու-

նության միջոցով դիմադրողականության աճի ռազմավարությամբ: Հետևաբար՝ երկրի ջանքերն արդյունաբերական քաղաքականության շրջանակներում ընկերությունների մրցունակության մակարդակի բարձրացման, ճյուղային արտոնյալ վարկավորման և աջակցության այլ մեխանիզմների միջոցով խոցելիության նվազեցման ուղղությամբ լիարժեքորեն չեն արդարացվի, քանի դեռ բացակայում են արտադրողականության մշտական աճն ապահովող ինստիտուցիոնալ խթանները:

Խնայողությունների ձևավորման մարտահրավերը: Տնտեսությունը հնարավորություն ունի արդյունավետ գործելու և ապահովելու մեծ ակտիվություն, եթե մշտապես ներդրումային հոսքեր կլանելու կարողություն ունենա: Օտարերկրյա ներդրումների համար տնտեսության գրավչության պահպանումը ռազմավարական նախապայման է: Այդուհանդերձ, ՕՈՒՆ-ների ապահովումը կարող է պարբերական բնույթ կրել, հաճախ պայմանավորված լինել այնպիսի արտաքին գործոններով, որոնց չեզոքացումը Հայաստանի համար անհաղթահարելի լինի: Հետևաբար՝ եկամուտներ-խնայողություններ-ներդրումներ շղթայի գործարկման ներքին կարողության ապահովումը նույնպես մարտահրավեր է: Խնայողության օգտին որոշումներ կայացնելու կամ կապիտալի արտահոսքը կանխելու լավագույն միջոցը երկրում ներդրումներ անելու հնարավորության ստեղծումն է: Այդպիսի պայմաններ ստեղծվում են, երբ երկիրը մշտապես պահպանում է արդիական տնտեսություն ունենալու հավակնությունը: Այսինքն՝ արդիականացման գործընթացները երբեք չպետք է խզվեն, որպեսզի լրացուցիչ խնայողությունները լրացուցիչ եկամտի ապահովման հնարավորություն ստեղծեն: Կարևորագույն նպատակը անձի կողմից իր մտավոր և ֆիզիկական կարողությունների լիարժեք իրացումն է՝ դրա դիմաց համարժեք նյութական, բարոյական և հոգևոր փոխհատուցման ապահովմամբ:

Աճի ներառականության ապահովման հրամայականը: Հայաստանում տնտեսական աճի կայունության, զարգացման վերածելու նպատակադրման, աճի արդյունքները բնակչության կենսամակարդակի բարձրացմանը ծառայեցնելու հնարավորությունները պայմանավորված են աճի որակի (մոդելի) և արագության (տեմպի) ապահովմամբ: Նոր արդյունքի ստեղծման գործընթացում անհրաժեշտ է ներգրավել հնարավորինս մեծ թվով ճյուղեր և աշխատանքային ռեսուրսներ: Ընդ որում, նոր աշխատատեղերի ստեղծումը պետք է իրականացվի արտադրողական զբաղվածության ընդլայնման հաշվին: Սա աճի նոր մոդելի որդեգրման նպատակադրում է: Աճի այս մոդելը մղում է շարունակաբար նոր լուծումներ որոնելու առկա խնդիրները լուծելու համար, ինչը հանգեցնում է աճի ռեսուրսատար շարժիչները ոչ ռեսուրսատար շարժիչներով փոխարինելու գործընթացին:

Տարածաշրջանային գերազանցություն ապահովելու անխուսափելիությունը: Զարգացող փոքր տնտեսությունները, որոնց թվում է նաև Հայաստանը, համընդհանուր խաղին մասնակցելու հնարավորություն են ստանում տարածաշրջանային միասնացման գործընթացներում հաջողելու միջոցով: Միաժամանակ, ինտեգրման ձևաչափերում մասնակիցները կարող են ստանձնել առաջամարտիկ կամ հետնապահի դերը: Առաջինը են-

թաղրում է հստակ արտահայտված առավելությունների առկայություն, ինչի միջոցով միավորման ներսում կարելի է հաստատվել առաջարկ ձևավորողի խորշում: Ներկայումս, միասնացման նոր ձևաչափերի մշակման փուլում, Հայաստանն այդպիսի հայտ ներկայացնելու մարտահրավեր ունի: Նշանակում է՝ «դերերի» բաշխման այս փուլում պետք է «շտապել»՝ զարգացման նոր հավակնությամբ ու առանձնահատուկ առաջարկով, քանի որ «հետնապահի» ծուղակում հայտնվելու հեռանկարն անընդունելի է:

Արտաքին և ներքին մարտահրավերները վտանգներ են, եթե երկիրը պատշաճ ձևով չի ընկալում և հասցեագրում դրանք: Միևնույն ժամանակ, դրանք հնարավորություններ են, եթե երկիրը զարգացման օրակարգ իրականացնելու հավակնություն ունի: Համաշխարհային փորձը վկայում է, որ զարգացում ապահովելու խնդրի իրատեսական լուծումը, բազմազանեցումից ու մասնագիտացումից զատ, տեխնոլոգիական ճեղքում ապահովելն է՝ ի մի բերելով կուտակված ներուժը, ընդլայնելով հնարավորությունների բազան, ձևավորելով և հաստատելով համարժեք միջավայր: Այս իմաստով, կարևորագույն խնդիրներ պետք է համարվեն քաղաքականության մշակման ու իրականացման գաղափարախոսության և ներքին խթանների վերանայումը, քաղաքական պարբերաշրջաններից ու միջնաժամկետ սցենարներից անկախ զարգացման երկարաժամկետ՝ առաջնորդող տեսլականի շուրջ համախմբումը:

Համաշխարհային արժեշտթաներում, տեղակայման, մասնագիտացման նպատակային քլաստերների և աճի ռազմավարությունների ընտրության առումով, գոյություն չունեն միանշանակ լուծումներ զարգացող երկրների համար: Հաջողության տեսլականի ձևավորումը պահանջում է առկա կարողությունների գնահատման ու սահմանափակումների գիտակցման հիման վրա իրատեսական սցենարների ձևավորում և արդյունավետ իրագործում: Մեր վերլուծություններն ու գնահատականները հանգեցնում են այն համոզման, որ Հայաստանի զարգացման քաղաքականության ողջ վեկտորն այսուհետ նորարարական զարգացման միջոցով գիտելիքահենք տնտեսության ձևավորումն ու կայացումն է: Որքան էլ տարբեր լինեն մոտեցումները զարգացման առանձին տեսակետների վերաբերյալ, երկրների առաջընթացի արդյունքներն ու օրինաչափությունները, համաշխարհային տնտեսության ներկա իրողությունները, Հայաստանի զարգացման միտումները, հնարավորություններն ու սահմանափակումները հաշվի առնելով, գիտելիքահենք տնտեսությունն ընդունվում է որպես երկարաժամկետ կայուն զարգացման ուղղորդիչ մոդել, որի առանցքային գործոնը գաղափարներն են, իրացման ճանապարհը՝ նորաստեղծությունն ու դրա զարգացումը, հիմնական մարտահրավերը՝ գաղափարների խզվածքի հաղթահարումը:

Ի՞նչ ենք հասկանում նորարարություն ասելով և ինչպե՞ս ենք ընկալում այդ համակարգը:

Հայաստանի ինովացիոն զարգացման հայեցակարգի հիմքում դրվում է նորաստեղծության լայն ընկալումը, ինչը թույլ կտա ձևավորել նաև գիտելիքահենք տնտեսության կառուցման փուլերը: Նորամուծությունը, ժամանակակից ընկալմամբ, գործընթաց է, որը

լիարժեք հաստատվում է նոր գաղափարի ձևավորումից մինչև առևտրայնացում ամբողջական շղթայի իրացման արդյունքում: Դա բավական բարդ երևույթ է. ներառում է նորույթի ձևավորումից մինչև դրա կիրառության ողջ կենսապարբերաշրջանում ներգրավված մասնակիցների ու միավորների միջև կապերի ու փոխհարաբերությունների համալիրը: Նորարարությունն իր բնույթով, ոլորտային ու տարածական ընդգրկմամբ զարգացման հնարավորություններ է ընձեռում բոլոր երկրներին: Եթե զարգացած երկրներն օբյեկտիվորեն գործում են տեխնոլոգիաների վերին սահմանագծում, զարգացող երկրները հնարավորություն ունեն համընդհանուր գիտելիքն ու տեխնոլոգիան կլանելու ու երկրի մակարդակով տարածելու:

Այլ կերպ ասած՝ նորաստեղծությունը որպես զարգացման մոդել դիտարկելիս կարևորագույն խնդիրը հարաբերական նորույթի՝ իբրև հարստության, աշխատատեղերի և բարեկեցության աղբյուրի տարրալուծումն ու տարածումն է: Սա պահանջում է աճի սկզբունքային այլ բնույթի քաղաքականության որդեգրում: Նորարարության զարգացման նպատակադրումը չի կարող մնալ պարզապես հոչակման մակարդակում և ենթադրում է ինչպես զարգացման քաղաքականության հենքային գաղափարախոսության, միջնաժամկետ ու երկարաժամկետ նպատակադրումների, մեխանիզմների ու գործիքների համակարգային փոխակերպում, այնպես էլ ներկայում իրականացվող ոլորտային քաղաքականությունների շրջանակներում որդեգրված մոտեցումների՝ նորաստեղծական ուղղորդմամբ վերանայում:

Վերափոխման տեմպն ու որակը գերազանցապես և հիմնականում պայմանավորված են մարդկային գործոնով, քանի որ համակարգային փոփոխության արագությունը մեծապես կախված է նոր տեխնոլոգիական դրվածքին մարդու հարմարվողականությունից: Այստեղ է, որ զարգացման առանցքը դառնում է մարդը՝ իր մտավոր, հոգևոր և ֆիզիկական արժեքներով: Հետևապես՝ մարդկային կապիտալի զարգացման նպատակով իրականացվող ներդրումները որակապես նոր՝ նորաստեղծական տնտեսության կայացման նախապայման են:

Ինովացիոն գործընթացները ծագում և զարգանում են, այսպես կոչված, ազգային նորաստեղծական համակարգերում: Նորարարության համակարգային մոտեցմամբ քաղաքականության առանցքը վերաբերում է այդ գործընթացի բոլոր մասնակիցներին, միավորներին, ինստիտուտների փոխհարաբերություններին՝ դիտարկելով գիտելիքի ստեղծման, փոխակերպման ու կիրառության ողջ շղթան: Նշված համակարգը ներառում է մասնավոր ու հանրային կազմակերպություններն ու դերակատարներին, որոնք փոխկապված են՝ միավորելով անհրաժեշտ մտավոր, տեխնիկական, առևտրային ու ֆինանսական կարողություններն ու ներդրումները:

Անշուշտ, նորաստեղծական համակարգը հիմնված է բավական բարդ հարաբերությունների վրա, բայց միանգամայն հստակ է և միանշանակ, որ այդ հարաբերություններում առանցքային օղակը կրթությունն է: Որպես նորարարության գործընթացը սնուցող հանգույց՝ գաղափարների ու գիտելիքի ստեղծումը և նոր գիտելիքի, տեխնոլո-

գիաների, նորամուծական ապրանքների ու ծառայությունների կիրառումը պայմանավորված են ոչ միայն առկա կարողություններով, այլև սովորելու, յուրացնելու, հարմարվելու, վերափոխվելու ունակությամբ ու պատրաստակամությամբ: Նորարարական մտածողություն, վարքագիծ ու խթաններ ձևավորելու տեսակետից առանցքային նշանակություն ունի ոչ միայն բարձրորակ ֆորմալ կրթական համակարգի կայացումը, այլև կարողությունների ու հմտությունների լայն տիրույթի ապահովումը, այդ թվում՝ ողջ կյանքի ընթացքում և ոչ ֆորմալ կրթական հնարավորությունների իրացմամբ:

Հաջորդ կարևորագույն սկզբունքը, որ պետք է հստակ գիտակցենք բոլորս, այն է, որ ինովացիայի հիմնական կրողները ձեռնարկատերերն են, որոնք օգտագործում են հասանելի գիտելիքն ու տեխնոլոգիան նոր ապրանքներ կամ գործընթացներ առաջարկելու և տարածելու նպատակով: Շուկայական տնտեսության ժամանակակից իրադրությունում արդյունավետությունն ու օգուտի մաքսիմալացումը չեն որոշվում միայն մասշտաբից տնտեսման գործոնով, ինչը հատկապես խնդրահարույց է փոքր ներքին շուկա ունեցող երկրների համար: Նորարարական մտածողությամբ ձեռներեցության կայացման համար որոշիչ է սպասարկող ենթակառուցվածքների աստիճանական զարգացումը՝ հատկապես հետազոտությունների և մշակումների մասով, քանի որ միայն նորաստեղծության շղթայի այդ երկու կարևորագույն հատվածների փոխգործակցության պայմաններում է հնարավոր ապահովել ինովացիոն գործընթացի սիներգիան:

Այստեղ է, իհարկե, առաջ գալիս հաջորդ հարցադրումը. **ո՞րն է պետության դերը նորաստեղծական համակարգի կայացման և զարգացման տեսանկյունից:** Որակյալ կրթական միջավայր, բարենպաստ գործարար մթնոլորտ, խրախուսող գիտական միջավայր. սրանք հանձնառություններ են, որոնք անժխտելիորեն ստանձնում են մերօրյա կառավարությունները: Այդուհանդերձ, պետության դերը որոշիչ է ոչ միայն պատշաճ ինստիտուտների ձևավորման ու կայացման, համակարգի տարրերի միջև անհրաժեշտ հոսքերի ապահովման, այլև նորարարության արդյունքի սպառման տեսակետից: Նորաստեղծության համակարգային ընկալման պարագայում հստակ է, որ խնդիրը ոչ միայն հետազոտությունների և գիտության անմիջական արդյունքի ձեռքբերումն է, այլև տնտեսությունում ու հանրային կյանքի բնագավառներում գիտելիքի ու տեխնոլոգիայի լայնատարած կիրառությունն ապահովելու նպատակով արդյունավետ հոսքերի ձևավորումը: Պետությունն այս իմաստով առանցքային դերակատարում ունի կրթական-գիտական ենթակառուցվածքներ, գիտելիքի ու տեխնոլոգիայի կլանման, յուրացման ու տարածման արդյունավետ հոսքեր, գործիքներ ու մեխանիզմներ (այդ թվում՝ ֆինանսական), նորարարական զարգացման քաղաքականության առաջնորդման նպատակով ինստիտուցիոնալ կարգավորումներ ապահովելու տեսակետից:

Ընդհանրացնելով կարելի է ասել՝ նորարարական զարգացմանն անցումն սկսվում է գիտական և տեխնոլոգիական զարգացումների կլանումից ու համընդհանուր զարգացումներին զուգահեռ ազգային համատեքստում տեղայնացումից: Այս համապարփակ և

բազմաշերտ գործընթացը պահանջում է արդյունավետ, կենսունակ ու ճկուն ազգային նորարարական համակարգի ձևավորում, այդ թվում՝

- պատշաճ կրթական համակարգի ձևավորման ու կայացման միջոցով մարդկային կապիտալի զարգացում,
- համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման միջոցով հետազոտությունների և մշակումների (ՀևՄ) խթանում ու մասշտաբայնացում,
- անհրաժեշտ ինստիտուցիոնալ և կարգավորման շրջանակի ձևավորում:

Նշված ուղղություններով էլ ուսումնասիրվել և գնահատվել են ինչպես հաջողված միջազգային փորձը, այնպես էլ Հայաստանի ինովացիոն շրջանակը: Արդյունքում հնարավոր է դարձել վեր հանել ներկայիս համակարգի սահմանափակումներն ու խզվածքները, որոնք էլ պետք է դառնան առաջին փուլի հաղթահարման խնդիրները: Ի դեպ, այս գործընթացում, բնականաբար, ուսումնասիրել և ականջալուր ենք եղել նաև մեր գործընկերների դիտարկումներին: Այսպես՝ նախ կառանձնացնեինք **նորաստեղծության նեղ ընկալումը մեզանում**: Ընդհանուր առմամբ, շեշտադրվում է միայն տեխնոլոգիական նորարարությունը՝ ծրագրերի ու նախաձեռնությունների հիմնական մասը կենտրոնացնելով բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղությամբ: Համակարգի ընդհանրական և արդյունավետ գործողության համար չափազանց կարևոր է ոչ տեխնոլոգիական նորամուծությունների՝ գործընթացների, սոցիալական և կառավարման խրախուսումը: Մյուս կողմից՝ ռազմավարական նպատակը միակողմանի է՝ սահմանափակվելով միայն վերազգային կորպորացիաների ներգրավմամբ, այնինչ նշանակալի կարևորություն ունեն նաև տեղական հետազոտական ինստիտուտների և գործարարության կայացումն ու միջազգայնացումը:

Հաջորդ սահմանափակումը համակարգի տարրերի միջև թույլ կապերն են: Նորարարության առողջ միջավայրի գործողության համար անհրաժեշտ կապերը գրեթե չեն գործում: Մասնավորապես՝ կրթություն-գիտություն-ՀևՄ-արտադրություն շղթան, ինովացիոն միջնորդների ինստիտուտը և աջակցող կառույցները գործընթացներին մասնակցելու աղքատիկ զամբյուղ ունեն, մեկնարկային ֆինանսավորման հնարավորություններ գործնականում գրեթե չկան: Ըստ այդմ՝ տեղային միջավայրը բարենպաստ չէ նորարարական ձեռնարկատիրության զարգացման համար:

Կրթական համակարգի արդյունավետության ապահովման խնդիրը: Մարդկային կապիտալի վրա հիմնված զարգացման համատեքստում «նախադպրոցականից համալսարանական կրթություն և հետմասնագիտական հարատև ուսուցում» շղթայի բոլոր օղակներում կրթական ծառայությունները համարժեք և մրցունակ չեն, թույլ են արտահայտված կրթության և աշխատաշուկայի ու եկամուտների մակարդակի միջև փոխադարձ կապերը: Ոլորտի ընթացիկ բարեփոխումները պետք արմատապես լուծեն այս խնդիրները:

Ինչ վերաբերում է մյուս առանցքային գործոնին՝ ֆինանսավորման գործիքակազմին, ապա այստեղ ևս անելիքներն առավել քան շատ են: Նորաստեղծության ոլորտի ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է դոնորական ռեսուրսների միջոցով՝ պաշտո-

նական աջակցության և մասնավոր աղբյուրների հաշվին: Սա նույնպես համակարգի հատվածային գոյության մասին է վկայում, ինչը չի կարող քաղաքականության երկարաժամկետ կուրս լինել:

Ըստ նորարարական համակարգի առանձին բաղադրիչների՝ կուտակված ներուժից, ձեռքբերումներից ու խզվածքներից, ինչպես նաև համաշխարհային արժեշղթայում մասնակցության աստիճանից ելնելով, ընդհանուր առմամբ, Հայաստանի ինովացիոն միջավայրի որակը պետք է բնութագրել որպես համընդհանուր տեխնոլոգիական սահմանագծից հեռու: Այդուհանդերձ, նպատակային և իրատեսորեն ծրագրված ռազմավարության հետևողական, համընդգրկուն և մասնակցային իրագործման դեպքում տեխնոլոգիական ճեղքումը հնարավոր է, քանի որ նաև լուրջ նախադրյալներ կան: Դրանք հիմնականում արտահայտվում են գիտելիքի և մտավոր գործունեության նկատմամբ մեր հասարակության ընդգծված հակվածությամբ, ստեղծարար և ձեռնարկատիրական ունակությունների դրսևորմամբ:

Նշված նպատակի իրագործման համար.

- **Կարճաժամկետ հատվածում խնդիր է դրվելու ապահովել անցումն արտահանման հնարավորությունների իրացումից ինովացիոն քլաստերների ձևավորման:** Սա հնարավոր է ապահովել կրթական համակարգի արմատական վերանայման և գործարարության մտածողությունը կարճաժամկետից երկարաժամկետի վերափոխման, գիտության և արտադրության միջև խզվածքի հաղթահարման, ներկա նորամուծական համակարգի դրվագային կառուցվածքի վերանայման միջոցով:
- **Միջնաժամկետ հատվածում պետք է ապահովել հիմնավոր գիտելիքային և ռեսուրսային պաշարների առկայություն՝ կուտակված փորձն ու հաջողված օրինակները երկրի մասշտաբով և ըստ տնտեսության առանձին հատվածների տարածելու համար:** Այստեղ ընդգծվում են համաշխարհային առաջատար կրթական կենտրոնների հետ համագործակցության ընդլայնման, առկա գիտելիքը տեղական ՀևՄ մշակույթի փոխակերպման և միջազգային ցանցերում ներգրավվածության ապահովման հրամայականները:
- **Երկարաժամկետ հատվածում արդեն կարող ենք խոսել նորաստեղծական տնտեսության կայացման մասին, երբ կունենանք կուտակված գիտելիքի, տեխնոլոգիաների և արդյունաբերական հանգույցների կրիտիկական զանգվածների՝ երկրի մասշտաբով տարածման և առավելապես գիտելիքահենք տնտեսության ձևավորման նպատակադրումը:**

Նախագիծը հաջորդաբար անդրադառնում է նշված ժամանակային փուլերի ընթացքում անհրաժեշտ համապատասխան քաղաքականության ուղղություններին և գործիքներին: Սակայն խոսքը կուզենայինք ամփոփել այն միջավայրային և վարքագծային նախապայմաններով, որոնք կկանխորոշեն քաղաքականության արդյունավետությունը: Սովորաբար, այս դեպքում մասնավորապես, լուծումները հիմնականում հանրահայտ են: Սակայն

հաջողության են հասնում միայն այն երկրները, որոնք կարողանում են ձևավորել համապատասխան արժեքային համակարգ և հանրային վերաբերմունք: Այսպես՝ առաջընթացի ընտրված մոդելով հաջողելու համար անհրաժեշտ է անշեղ **հետևողականություն հանդես բերել**: Գործարարության որոշումները հիմնականում կառուցվում են կարճաժամկետ ակնկալիքների վրա, իսկ տնտեսական քաղաքականության որոշումները երբեմն չեն ծառայում մրցունակության մակարդակի բարձրացման նպատակին: Կանոնների հարցում հետևողականության խաթարումը առաջ է բերում **վստահության անհրաժեշտություն**: Վստահության պակասի պայմաններում ձևավորվում է, այսպես կոչված, **այլընտրանքի հակադրման մարտահրավերը**: Հասարակությունը՝ որպես զարգացող և անցումային, ինքնաբերական կամ արտաքին ազդեցությունների ուժով հաճախ հանգում է արժեքների բախման. սեփականատիրության նկատմամբ այլաձևված վերաբերմունք, պետության դերի տարընկալում, զարգացման խնդիրներում անվճռականություն և այլն: Դրանք, քաղաքականության իրազորման առումով, պակասեցնում են ռեսուրսային հնարավորությունները:

Այսպիսով՝ Հայաստանի զարգացման ռազմավարական նպատակները, քաղաքականության առաջնահերթություններն ու ուղղությունները, երկրի զարգացմանը զուգահեռ ու արտաքին միջավայրի իրողություններից ելնելով, մշտապես ճշգրտվել ու վերանայվել են: Աղքատության հաղթահարման ռազմավարական գերակայությունը վերաճել է կայուն զարգացման և որակյալ զբաղվածության ապահովման նպատակադրման: Շուկայական տնտեսության ինստիտուտների ու ենթակառուցվածքների կայացման քաղաքականությունից անցում է կատարվել արտաքին առևտրին ուղղված արդյունաբերական զարգացման գաղափարախոսությանը: Տնտեսական քաղաքականության գործիքակազմերը նույնպես շարունակաբար վերանայվել են՝ հնարավորինս ապահովելով տվյալ փուլի համար պատշաճ կարգավորման միջավայր: Այս ամենով հանդերձ՝ մինչև ներկա պահը երկրի երկարաժամկետ զարգացման քաղաքականության տրամաբանությունն առավելապես կենտրոնացել է ռեսուրսային հնարավորությունների շրջանակում և որոշակի ժամանակահատվածում հասարակության բարեկեցության ապահովման ռազմավարական նպատակի շուրջ: Ինովացիոն զարգացման հայեցակարգով ներդրվում է զարգացման որակապես նոր գաղափարախոսություն՝ ապագայի հավակնոտ տեսլական, որի բովանդակությունը հասարակության տեխնոլոգիական վերափոխումն ապահովելն է: Այլընտրանքը զարգացման այսօրվա օրինաչափությունների շարժընթացի և տրամաբանության ներքո ռեսուրսային երկիր մնալն է՝ արդյունքում և շարունակաբար խորացնելով խզվածքը մտավոր ներուժի, գիտելիքի ու տեխնոլոգիայի մշակման ու փոխանակման համաշխարհային կենտրոնների նկատմամբ:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. բարձրագույն կրթություն, տնտեսական զարգացում, տնտեսության նորաստեղծական կարողություն, ազգային նորաստեղծական համակարգ, մարդկային կապիտալ, գիտելիքահենք տնտեսություն

Հոդվածում քննարկվում են բարձրագույն կրթության և տնտեսական զարգացման փոխառնչությունները: Բարձրագույն կրթության համակարգը ձևավորում է ազգային նորաստեղծական համակարգի հիմքը՝ ապահովելով մրցունակություն միջազգային մակարդակում և արագ արձագանքելով տեղական պահանջներին: Համալսարանները դիտարկվում են որպես ազգային նորաստեղծական համակարգի և տարածքային ենթահամակարգերի հիմնական բաղադրիչներ:

Որպես ներկա տեխնոլոգիական առաջընթացի և գիտելիքատար աշխատանքի հետևանք՝ տնտեսական և սոցիալական զարգացումը հիմնվում է մարդկային կապիտալի զարգացման վրա, ըստ այդմ՝ համընդհանրացնող ու գիտելիքահենք տնտեսությունում մեծանում է բուհերի դերը գիտելիքի ստեղծման ու տարածման առումով:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի հիմնական նպատակ է հռչակվել որակյալ և բարձր արտադրողականություն ապահովող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով զբաղվածության ընդլայնումը¹: Այդպիսով՝ պետությունը պլանավորում է ստեղծել նոր աշխատատեղեր, որոնք կխթանեն երկրի տնտեսության զարգացումը:

Հարկ է նշել, որ որպես երկրի տնտեսական աճի և զարգացման հիմք է դիտարկվում մարդկային կապիտալը, ինչն էլ պայմանավորում է կրթական համակարգի նոր դերն ու նշանակությունը: Դա կարևորվում է երկրի կայուն և տևական տնտեսական զարգացման ապահովման, ազգային մրցունակության բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ դիրքի ամրապնդման առումով:

Անշուշտ, մարդկային կապիտալի տեսանկյունից կրթությունը հասարակության և երկրի տնտեսական զարգացման հիմքն է: Բարձր որակավորմամբ աշխատողների պատրաստմանը զուգահեռ, կրթությունն իրականացնում է նաև կարևոր սոցիալ-քաղաքական և մշակութային գործառույթներ՝ դառնալով ազգային անվտանգության առանցքային գործոն:

Կրթական համակարգն ազդում է երկրի գիտական, տնտեսական, մշակութային և հոգևոր ներուժի ձևավորման վրա, որը նպաստում է ազգի՝ համաշխարհային քաղաքակրթության առաջընթացին համահունչ զարգացմանը:

¹ Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր: ՀՀ Կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442 - Ն որոշում, էջ 8:

Տնտեսական աճի ժամանակակից տեսությունը շեշտադրում է մարդկային կապիտալի դերը կայուն աճի գործում և: Այդ առումով, կրթությունը վաղուց համարվում է տնտեսական բարեկեցության կարևոր գործոն: Այն մի կողմից՝ դիտարկվում է որպես զարգացման արդյունք, իսկ մյուս կողմից՝ որոշիչ ներդրում զարգացման գործընթացում:

Աճի տեսությանը վերաբերող գրականությունն առանձնացնում է առնվազն երեք կառուցակարգ, որոնց միջոցով կրթությունը կարող է ազդել տնտեսական աճի և զարգացման վրա¹:

Առաջին՝ կրթությունը կարող է ընդլայնել աշխատուժին ներհատուկ մարդկային կապիտալը, ինչն էլ իր հերթին բարձրացնում է աշխատանքի արտադրողականության մակարդակը²:

Երկրորդ՝ կրթությունը կարող է մեծացնել տնտեսության նորաստեղծական ունակությունը, նպաստել տեխնոլոգիական կլանման ազգային կարողության ուժեղացմանը³:

Երրորդ՝ կրթությունը կարող է նպաստել գիտելիքների փոխանցմանը և տարածմանը⁴:

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ բարձրագույն կրթության զարգացման նպատակով կատարվող ներդրումներն օգնում են հասարակական զարգացման հիմնախնդիրների նշանակալի մասի հաղթահարմանը, սոցիալական լարվածության մեղմմանը, բնակչության սոցիալապես խոցելի խավերի մեկուսացման հաղթահարմանը և կանխում են սոցիալական անհավասարության մեծացումը:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության տվյալները վկայում են, որ ներկայում մարդկային կապիտալը նորաստեղծությունների առավել որոշիչ գործոն է. գոյություն ունի սերտ կապ կրթական ձեռքբերումների և նորաստեղծությունների մակարդակների միջև⁵:

Բնութագրական է նաև այն, որ, ըստ Համաշխարհային բանկի հետազոտությունների, ուսումնառության յուրաքանչյուր տարին ավելացնում է տևական աճը 0.58 տոկոսային կետով⁶:

¹ Hanushek E., Woessmann L., Education and Economic Growth. In: Penelope Peterson, Eva Baker, Barry McGaw, (Editors), International Encyclopedia of Education. Oxford: Elsevier. Volume 2, pp. 245–252.

² Mankiw N., Romer D. and Weil D., A contribution to the empirics of economic growth. Quarterly Journal of Economics, 1992, 107 (2), 407–437.

³ Aghion P. and Howitt P., Endogenous Growth Theory. Cambridge, MA: MIT Press, 1998. Lucas R., Romer P., Endogenous technological change. Journal of Political Economy, 1990, 99 (5, pt. II), S71–S102. On the mechanics of economic development. Journal of Monetary Economics 22, pp. 3–42. Գ. Վարդանյան, Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ, Եր.: «Գիտություն», 2008, էջ 320–321: Գ. Վարդանյան, Տեխնոլոգիայի կլանող ազգային կարողության հայեցակարգային շրջանակը, «Ֆինանսներ և էկոնոմիկա», N 4 (154) ապրիլ, 2013:

⁴ Nelson R. and Phelps E., Investment in humans, technology diffusion and economic growth. American Economic Review, 1966, 56(2), pp. 69–75. Benhabib J. and Spiegel M., The role of human capital in economic development: Evidence from aggregate cross-country data. Journal of Monetary Economics, 1994, 34(2), pp. 143–174.

⁵ Higher Education Cities and Regions, OECD 2009, p. 9.

⁶ Education Quality and Economic Growth, The World Bank, Washington, DC, 2007, p.9.

Համընդհանրացման և գիտելիքահենք տնտեսության զարգացման գործընթացները առաջացրել են այնպիսի փոփոխություններ, որոնք հավասարապես ազդում են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների տնտեսությունների վրա՝ ընդգծելով հատկապես բարձրագույն կրթության կարևորությունը: Այդ փոփոխությունների համատեքստում զարգացող երկրների տնտեսական զարգացման վրա բարձրագույն կրթության ազդեցության գնահատման ուղղությամբ կատարված հետազոտության արդյունքում բացահայտվել են համալսարանների կարևոր սոցիալական գործառույթները: Սակայն դրանք բավարար չափով չեն քննարկվում զարգացող երկրներում բարձրագույն կրթության ֆինանսական աջակցությանը վերաբերող բանավեճերի շրջանակներում:

Այդուամենայնիվ, բարձրագույն կրթության տնտեսական օգուտներն ակնհայտ են ու ձեռք են բերվում տարբեր մակարդակներում՝ սկսած մարդկանց անձնական եկամուտներից մինչև երկրի տնտեսական աճը և զարգացումը:

Համապատասխան հետազոտության արդյունքները վկայում են շրջանավարտների աշխատավարձի մակարդակի վրա բուհական դիպլոմի ազդեցության մասին: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ցածր եկամտով երկրներում կրթության մակարդակի և աշխատավարձի միջև կապը միշտ չէ, որ սերտ է եղել: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս նաև, որ երիտասարդների համար նախնական մասնագիտական և միջնակարգ կրթության հասանելիությունը հանգեցնում է բուհերի շրջանավարտների աշխատավարձի մակարդակի բարձրացման:

Բացի վերոնշյալ կապից, կան տնտեսական զարգացման վրա բարձրագույն կրթության նշանակալի ազդեցության այլ ապացույցներ: Ակնհայտ է, որ բարձր աշխատավարձն աշխատանքի բարձր արտադրողականության հիմնական շարժառիթներից է: Իր հերթին՝ աշխատանքի բարձր արտադրողականության հնարավոր է հասնել կառավարման և տեխնոլոգիական նոր գիտելիքների ու նորաստեղծությունների, այսինքն՝ տնտեսական զարգացման հիմքերի գործադրմամբ:

Այսպիսով՝ բարձրագույն կրթությունը դառնում է ոչ միայն գերիշխող, այլ նաև վճռորոշ գործոն բարձրակարգ հմտություններով մասնագետների պատրաստման գործում: Անցումը տեխնոլոգիահենք նոր տնտեսությանը շեշտակի բարձրացնում է պահանջվող հմտությունների մակարդակը, որի մասին վկայում է հատկապես զարգացած երկրների փորձը: Այսպես օրինակ՝ ԱՄՆ-ում նոր աշխատատեղերի 85%-ի դեպքում պահանջվում է բարձրագույն կրթության որոշակի աստիճան¹:

Հատկանշական է, որ 2013 թ. ՀՀ-ում աշխատանքի է ընդունվել բուհերի շրջանավարտների 56%-ը², ինչը, թերևս, նշանակում է, որ աշխատաշուկայի պահանջարկը բարձրագույն կրթության նկատմամբ կազմել է նույնքան, կամ մնացած մասի որակավորումը պարզապես չի համապատասխանել ներկայացվող պահանջներին: Ինչ խոսք, երկու դեպ-

¹ The Role of Higher Education in Economic Development. Higher Education Alliance for the Rock River Region. Prepared by NIU Outreach, May, 2005.

² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014, էջ 117:

քում էլ իրավիճակը մտահոգիչ է, և դրա առաջացման պատճառների շարքը կարելի է դասել նաև ՀՀ տնտեսության կառուցվածքը և զարգացման ներկայիս մակարդակը: Ի վերջո, այդպիսի աշխատատեղերով է ապահովվում ցանկացած երկրի ոչ միայն տնտեսական աճը, այլ նաև զարգացումը: Ավելին, ավագ սերնդի փոխարինման համար բարձրագույն կրթության համակարգը պետք է ապահովի բարձրորակ մասնագետներ:

Թեպետ առկա համապատասխան գրականության մեջ բացակայում է կրթության տարբեր մակարդակների և տնտեսական զարգացման միջև կապի փաստարկումը, սակայն հաջողվել է բացահայտել բարձրագույն կրթությամբ մարդկանց տեսակարար կշռի և տնտեսական աճի միջև փոխկապվածությունը¹: Ընդ որում, որոշ հեղինակներ համոզված են, որ բարձրագույն կրթությունն ավելի մեծ ազդեցություն ունի տնտեսական զարգացման վրա, քան կրթության մյուս մակարդակները:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ բարձրագույն կրթությունը, բացի տնտեսականից, նաև ոչ տնտեսական օգուտներ է ապահովում: Դա բարենպաստ ազդեցություն ունի բուհերի շրջանավարտների անհատական որակների ձևավորման առումով, որոնք դրսևորվում են քաղաքական ակտիվության բարձրացմամբ, կանանց իրավունքների ընդլայնմամբ, սեփական առողջության և սննդի նկատմամբ ավելի ուշադիր վերաբերմունքով²:

Բարձրագույն կրթությունը նպաստում է այնպիսի ինստիտուտների ամրացմանը, ինչպիսիք են քաղաքացիական հասարակությունը, կառավարությունը, պետական ծառայությունները, ինչպես նաև այնպիսի սոցիալական նորմերի ու հայացքների ձևավորմանը, ինչպիսիք են, օրինակ՝ հանդուրժողականությունը, ժողովրդավարությունը, շրջակա միջավայրի պահպանությունը, համերաշխությունն ազգային և միջազգային մակարդակներում: Անշուշտ, վերոնշյալներն ինքնին որոշիչ գործոններ են կայուն տնտեսական զարգացման համար:

Հարկ է նշել սակայն, որ դեռևս բավարար չեն այն ուսումնասիրությունները, որոնք նվիրված են բարձրագույն կրթության դերին և դրա վրա ազդող գործոններին: Շատ աշխատանքներում դիտարկվում է բուհերի գործունեությունը, սակայն դրանցից քչերում է շոշափվում այն հարցը, թե ներկայում բուհերն ինչպես են ներգործում տնտեսական զարգացման վրա: Գործնականում բացակայում են բուհերի ազդեցության գնահատումները: Սակավ է նաև միջնորդավորված գործոններին (օրինակ՝ քաղաքական մթնոլորտ կամ աշխատաշուկայի փոփոխություններ) առնչվող տեղեկատվությունը:

Տնտեսական զարգացման վրա տարբեր գործոնների ազդեցության վերաբերյալ տեղեկատվության բացակայության պայմաններում միջազգային կազմակերպությունները և երկրների կառավարությունները հաճախ ռիսկի են դիմում՝ ներդրումներ կատարելով այն վերափոխումների մեջ, որոնք կարող են հանգեցնել բացասական հետևանքների: Բարձրագույն կրթության դրական ազդեցությունը չեզոքացվում է այնպիսի գործոններով, ինչ-

¹ Шендел Р., Маккоуэн Т., Окетч М., Экономический и неэкономический эффект высшего образования в странах с низким доходом// Международное высшее образование. Осень, 2014 (№77), с 11-12.

² Նույն տեղում:

պիսիք են նախնական մասնագիտական և միջնակարգ կրթության անբավարար տարածվածությունը, դասախոսական և հետազոտական աշխատանքների ցածր որակը, ակադեմիական ազատության և բարձրագույն կրթության հավասար հասանելիության բացակայությունը և հնարավորությունների անհավասարությունը:

Վերոնշյալ գործոններն առկա են հիմնականում զարգացող երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, հետևապես՝ բարձրագույն կրթության թույլ դիրքը կարող է պայմանավորված լինել նշված գործոններով: Միջազգային կազմակերպությունների ֆինանսական աջակցության միջոցների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ դրանք հաճախ չեն անդրադառնում վերոհիշյալ հիմնախնդիրներին, ինչն էլ երբեմն աջակցության ոչ ճիշտ թիրախավորման պատճառ է դառնում:

Հարկ է նշել նաև մեկ այլ կարևոր հիմնախնդիր՝ բարձրագույն կրթության համակարգում նկատվող բացասական ու վտանգավոր միտումների մասին: 2009–2013 թթ. ժամանակահատվածում ՀՀ բուհեր ընդունվածների թիվը նվազել է 7.5 հազարով, իսկ շրջանավարտներինը՝ 1.4 հազարով¹: Ինչպես վկայում են 2014 և 2015 թթ. տվյալները, առաջիկա տարիներին այդ միտումները կուժգնանան: Բնականաբար, կնվազեն նաև բուհերի ֆինանսական միջոցները, և դրանով իսկ կվտանգվեն համակարգի արդյունավետ գործունեությունն ու զարգացումը, բարձրագույն կրթության վերափոխումների՝ հատկապես որակի բարելավման միջոցառումները: Ուստի դժվար չէ պատկերացնել, թե ՀՀ բարձրագույն կրթության համակարգն ինչպիսի մարտահրավերների է դիմակայելու, իսկ դրանց պատրաստ չլինելն ինչպես կանդրադառնա երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Այս եզրահանգումը կարևոր է ՀՀ-ում կրթության, մասնավորապես՝ բարձրագույն կրթության վերափոխումների պլանավորման և իրականացման տեսանկյունից:

Բարձրագույն կրթության առաքելության կարևոր մաս է կազմում տնտեսական զարգացումը, ուստի կրթության ոլորտում պետք է ապահովվեն անհրաժեշտ ներդրումներ՝ բարձրագույն կրթության համակարգի առջև ծառայած մարտահրավերներին դիմակայելու համար:

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014, էջ 117:

КОРЮН АТОЯН

ВЗАИМОСВЯЗИ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ И ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ

Ключевые слова: высшее образование, экономическое развитие, инновационная способность экономики, национальная инновационная система, человеческий капитал, экономика, основанная на знаниях

В статье обсуждаются взаимосвязи между высшим образованием и экономическим развитием. Система высшего образования формирует основу национальной инновационной системы, если она конкурентоспособна на международном уровне и быстро реагирует на внутренние потребности. Университеты необходимо рассматривать как основные составляющие национальной системы и региональной подсистемы, в которых они взаимодействуют с отраслями экономики.

Как следствие нынешнего технологического прогресса и знанияемкого труда, экономическое и социальное развитие все больше основывается на развитии человеческого капитала, что означает увеличение роли вузов в создании и распространении знаний в глобализирующейся экономике и экономике, основанной на знаниях.

KORYUN ATOYAN

INTERRELATIONS OF HIGHER EDUCATION AND ECONOMIC DEVELOPMENT

Key Words: higher education, economic development, innovative capacity of economy, national innovative system, human capital, knowledge-based economy

The article analyzes interrelations between higher education and economic development. The system of higher education forms a basis of national innovative system if it is competitive at the international level and quickly responds to internal needs. Universities should be considered as basic components of national innovative system and regional subsystems where they interact with branches of economy.

As a consequence of present technological progress and knowledge-based labor, economic and social development is increasingly based on development of human capital which means increasing and knowledge-based role of institutes of higher education in creation and dissemination of knowledge in globalizing economies.



ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ*

Հարցին, թե՛ եռանկյունի անիվներով կառքը կերթա՞, հնչում է այսպիսի պատասխան. «Է՛հ, կարող է, բայց արի ու փես այդ կառքում նստած մարդկանց վիճակը...»:

Կլոր անիվներով կառքը (լավ սահմանադրությունը), իհարկե, անհամեմատելի է եռանկյունի անիվներով կառքի (վատ սահմանադրության) հետ: Սակայն եթե կլոր անիվներով կառքը գնում է խորհուրդդ ու քարոքանդ ճանապարհով (սահմանադրականության անբավարար մակարդակ), այսօրեղ նստածների վիճակն ավելի բարվոք չի լինի եռանկյունի անիվներով կառքում նստածների վիճակից: Անկասկած, հասարակության համար շահեկան է կլոր անիվներով կառքով հարթ մայրուղով ընթանալը: Կարելի է նույնիսկ սլանալ:

Հիմնաբառեր. սահմանադրականություն, սահմանադրական տնտեսագիտություն, գնահատում, դիսկրետ մոդելավորում

Նյութում քննարկվում են սահմանադրական տնտեսագիտության հիմնահարցերը, «սահմանադրականություն» հասկացությունը, դրա սոցիալ-տնտեսական հատկությունը: Հրապարակման նպատակը դիսկրետ մոդելավորման որոշ օժանդակ եզրերի միջոցով՝ առաջին մոտարկմամբ, պայմանական օրինակի օգնությամբ սահմանադրականություն հասկացության գնահատման ուղենշումն է:

Հիմնախնդիրն ունի իրավական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային համատեքստ:

Հակիրճ անդրադառնանք օրակարգային դարձած սահմանադրական փոփոխությունների խնդրին: Դրանք խիստ շահեկան են, քանզի սահմանադրական փոփոխությունների համատեքստում առաջարկվող կառավարման համակարգը հնարավորություն է ընձեռում ընդգծելու նոր սկզբունքներով կառավարություն ձևավորելու սահմանադրական պատասխանատվությունը: Խոսքը հնարավոր իրական կոալիցիայի ձևավորման ու ֆինանսատնտեսական հիմնախնդիրների նորոպի լուծմանն է վերաբերում: Կարծում ենք՝ նոր հնարավորություններ են ստեղծվում արդյունավետ ռեսուրսօգտագործման ու դրամական նոր միջոցների տնօրինման, հանրային շահի առավելագույնս իրացման խնդիրների լուծման առումով: Այլ կերպ ասած՝ ՀՀ սահմանադրության փոփոխությունները բա-

* Ձեկուցումը թիմային աշխատանքի արդյունք է, որի համահեղինակներն են՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Առաքելյան, տնտեսագիտության դոկտոր, ֆիզմաթ գիտությունների թեկնածու Ռ.Ա. Գևորգյան, ասպիրանտներ Ժ.Ս. Մխիթարյան, Ս.Ս. Նահապետյան:

րեփոխումների անհրաժեշտ, բայց բավարար պայման չեն: Դրանք իրենց արտացոլումն են գտնում *սահմանադրականության* մեջ, որը մեր ուսումնասիրության բուն առարկան է:

Սահմանադրականության համապարփակ հիմնախնդիրն արդիական է եղել առաջին սահմանադրության ընդունումից (1995 թ.) ի վեր: Չմտնելով իրավունքի տեսական ոլորտ՝ նշենք, որ, ինչպես իրավագիտորեն նկատել են, սահմանադրության առկայությունը դեռևս չի նշանակում, թե գոյություն ունի սահմանադրականություն՝ որպես զանգվածային քաղաքական շարժում, որը շահագրգիռ է երկրում դեմոկրատական սահմանադրական կարգի ապահովման հարցում: Սահմանադրականության բովանդակությունը սահմանադրական շինարարությունն է, սահմանադրության նորմերի իրականացումը, դրանց պահպանումը, ապահովումը:

Սահմանադրական նորմերի ոչ լիարժեք իրացման պատճառների շարքում իրավամբ նշում են երկու կարևոր հանգամանք՝ քաղաքական կամքի բացակայություն, պարտադրանքի ինստիտուտի գործառնման անբավարարություն:

Հասկանալով, որ հեշտ գործ չէ այդ հանգամանքների՝ քաղաքական կամքի ու պարտադրանքի ինստիտուտի բաղադրատարրերի ու դրանց արդյունավետ գործադրման կառուցակարգերի բացահայտումը, նշենք, որ գոյություն չունի միանգամյա ազդեցության համադարման, որ կարճ ժամանակահատվածում արմատապես շտկի իրավիճակը՝ այսօր դեռևս տիրապետող սահմանադրականության ոչ բավարար մակարդակը:


Սահմանադրականության պակասուրդի աստիճանական մեղմումը, համապատասխան բոլոր հայտանիշների առումով, բարդ հիմնախնդիր է, որի լուծումներին ու մոտեցումներին կանդիդատներն ստորև: Նշենք, որ ԵՊՀ-ում ձեռնարկվել են որոշ քայլեր սահմանադրականության հիմնախնդրի հետազոտական ծրագրի իրագործման համար, որն ունի լուրջ տնտեսագիտական հայեցակետ: Այսօր տնտեսության կարգավորման ինստիտուտների անբավարար գործառությունը գերիշխող է դարձնում շուկայական տարերքը, երբ սերտաճում են քաղաքական ու շուկայական իշխանությունները (գործարարությունն ու քաղաքականությունը): Սրանք խնդիրներ են, որոնց արդյունավետ լուծումները պետք է փնտրել սահմանադրականության բավարար մակարդակն ապահովող իրավակարգավորումների մեջ:

Սահմանադրական տնտեսագիտությունը, լայն իմաստով, դասական տնտեսագիտության ընդհանուր վերածննդի տարրերից է: Ըստ Բյուքենենի՝ «...սահմանադրական տնտեսագիտությունն ուսումնասիրում է կանոնների (սահմանադրական) գործող հատկությունները, ինստիտուտները, որոնց շրջանակներում անհատները փոխազդում են, և այն գործընթացները, որոնց միջոցով այդ կանոններն ու ինստիտուտները ծագում և ընտրվում են»:

Եթե ավանդական տնտեսագիտությունում վերլուծությունները կենտրոնանում են առկա սահմանափակումների շրջանակներում ընտրության վրա, ապա սահմանադրական տնտեսագիտությունն ուղղորդում է վերլուծությունը դեպի սահմանափակումների միջև ընտրությունը՝ այդպիսով ներկայացնելով քննության «ավելի բարձր» մակարդակ¹:

¹ Ժ. Մխիթարյան, Ս. Նահապետյան, Սահմանադրական տնտեսագիտություն. առարկայական տիրույթը և ուղղությունները, «Ֆինանսներ և էկոնոմիկա», N 9-10, 2014:

Սահմանադրականության գնահատումը կարելի է ներկայացնել որպես գոյություն ունեցող «անհարթությունների» շտկմանն ուղղված խնդիր:



Գծապատկեր 1. Սահմանադրականության գնահատումն իրավաժողովրդավարական և սոցիալ-տնտեսական դիմադրողիկոսի

Պարզաբանենք «անհարթությունների» խորությունը, որով փորձառական հետազոտությունների ժամանակ կարող է գնահատվել սահմանադրականության աստիճանը: Այս իմաստով տեղին է մեջբերել իսլանդացի տնտեսագետ Թրայն Էգերսթունի «Քուուի թեորեմի ընդհանրացումը», ըստ որի՝ «տնտեսական աճը և երկրի զարգացումը հիմնականում կախված չեն գոյություն ունեցող կառավարության տիպից, եթե գործարքային ծախսերը տնտեսական և քաղաքական ասպարեզում հավասար են գրոյի: Սակայն եթե գործարքային ծախսերը դրական են, ապա իշխանության բաշխումը երկրի ներսում և իրավաստեղծ կազմակերպությունների ինստիտուցիոնալ կառուցվածքը դրա զարգացման կարևորագույն գործոններն են»:

Նոր ինստիտուցիոնալիզմի դրույթներից ելնելով՝ նշենք, որ գործարքային ծախսերը, այլ կերպ՝ գործառնական վերադիր ծախսերը կամ, փոխաբերական իմաստով՝ շփման ուժի հաղթահարման ծախսերը տնտեսական և քաղաքական ոլորտներում ունեն մի շարք բաղադրիչներ: Դրանք առաջանում են շուկայում (շուկայական գործարքային ծախսեր), կազմակերպություններում (կառավարչական ծախսեր) և կառավարության մակարդակում (քաղաքական գործարքային ծախսեր)¹:

Տ. Աճեմոլուն և Ջ. Ռոբինսոնն իրենց «Իշխանության, էլիտաների և ինստիտուտների կենսունակությունը» հոդվածում մշակել են մոդել, որը հիմնավորվում է ըստ դեյուրե և դեֆակտո քաղաքական իշխանության հասկացությունների գործառնան².

- Դեյուրե քաղաքական իշխանությունը պայմանավորվում է պաշտոնական քաղաքական ինստիտուտներով (սահմանադրություն): Դեֆակտո քաղաքական իշխանությունը որոշվում է առանձին խմբերի կազմակերպություններով և հավասարակշիռ ներդրումներով՝ ուղղված համապատասխան քաղաքական իշխանություն ստեղծելուն և պահպանելուն:

¹ Հ. Սարգսյան, Ա. Մարկոսյան, Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները: Ընդլայնված ամփոփում, Եր., «Զանգակ», 2014, էջ 70:

² Acemoglu D. and Robinson J., Persistence of Power, Elites and Institutions, American Economic Review, 98 (1), 2009, p. 267-293.

- Ենթադրվում է, որ երկիրը կարող է գտնվել երկու իրավիճակում՝ «դեմոկրատական» և «ոչ դեմոկրատական»: Գոյություն ունեն երկու տիպի խաղացողներ՝ «ժողովուրդ» և «վերնախավ»: Ժողովրդի ներկայացուցիչների եկամուտները ձևավորվում են աշխատավարձերի հաշվին, իսկ վերնախավին հասանելի են «արտադրական հզորությունները»:
- «Դեմոկրատական» իրավիճակում ժողովուրդը հնարավորություն ունի ավելի մեծ ազդեցություն ունենալու դեյուրե քաղաքական իշխանության վրա:

Ուսումնասիրության որոշակի արդյունքներն են.

- Դեֆակտո քաղաքական իշխանությունը հաճախ ավելի կարևոր դեր ունի տնտեսական քաղաքականության և ռեսուրսների բաշխումը սահմանելու հարցում, քան ինստիտուտները:
- Դեֆակտո քաղաքական իշխանությունը պատկանում է որոշակի խմբերի՝ որպես «զոռբայության» արդյունք:
- Դեյուրե քաղաքական իշխանության փոփոխությունը կամ ռեֆորմները հանգեցնում են դեֆակտո քաղաքական իշխանության վերադասավորմանը, նպատակ ունենալով չեզոքացնելու բարեփոխումների ազդեցությունը:
- Որոշակի դեպքերում վերնախավի ներդրումները կարող են այնպիսին լինել, որ ամբողջությամբ չեզոքացնեն տնտեսական բարիքների ստեղծման տարբերությունը «դեմոկրատիայի» և «դեմոկրատիայի բացակայության» պայմաններում:
- Որոշակի պայմաններում քաղաքական ինստիտուտները կարող են փոփոխվել, մինչդեռ տնտեսական ինստիտուտները գոյատևում են երկար ժամանակ:


Սահմանադրականությունը գաղափարների, սկզբունքների և կանոնների ամբողջություն է, ըստ որի փորձ է արվում պատասխանելու այն հարցին, թե ինչպես ձևավորել այնպիսի քաղաքական համակարգ, որը հնարավորինս կբացառի կամայականությունը: Սահմանադրականությունը պահանջում է նաև արդյունավետ և իրազեկ պետական ինստիտուտների առկայություն, որոնց գործունեությունն ուղղված է պետության գոյության հիմնական նպատակի իրացմանը՝ իր անդամների բարեկեցության բարձրացմանը¹:

Սահմանադրականության մակարդակի գնահատումը նախևառաջ պահանջում է դիտարկվող հասկացության պարզորոշում՝ գնահատման նկատառումներից ելնելով, որից անմիջականորեն կբխի սահմանադրականության գնահատման կառուցվածքային պատկերը: Վերջինս իրագործվել է դրա գնահատման հայեցակարգային մոտեցումների մշակմամբ², որի համատեքստում առաջարկվել է հետևյալ սահմանումը. «Սահմանադրականությունը զարգացման այնպիսի մակարդակ է, երբ սահմանափակված է պետական իշ-

¹ Հ. Սարգսյան, Ժ. Մխիթարյան, Ս. Նահապետյան, Սահմանադրականության հարացույցը. տնտեսագիտական առումները, գնահատման հիմնահարցերը // *Բանբեր Երևանի համալսարանի. սոցիոլոգիա, տնտեսագիտություն*, N 2 (17), 2015, էջ 36-51:


² Ժ. Մխիթարյան, Սահմանադրականության գնահատման հայեցակարգային մոտեցումները // *Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի տրաբեր*, հատ. 12, N 3, Եր., 2015:

խանության կամայականության հնարավորությունը, դա զսպվում է մարդու իրավունքներով և իշխանական թևերի բաժանման մեխանիզմով, երբ պետական իշխանությունը գործում է արդյունավետորեն՝ ծառայելով քաղաքացիների բարեկեցության անընդհատ բարձրացման վերջնանպատակին, երբ հիմնական սահմանադրական արժեքներն ապրող իրողություններ են»։ Հիմնվելով այս սահմանման վրա՝ առաջարկվել է սահմանադրականության գնահատման հետևյալ կառուցվածքային պատկերը և դրա տարրերից յուրաքանչյուրին համապատասխանեցվել է գնահատման ցուցիչների և ենթացուցիչների համախումբ։



Գծապատկեր 2. Սահմանադրականության համաթիվի կառուցվածքը


Հետազոտության վերջնանպատակը սահմանադրականության մակարդակի գնահատման մեթոդների բացահայտումն է և դրանց կատարելագործումը։ Այդ նպատակով առաջարկվում է քայլերի ներքոբերյալ հաջորդականության կենսագործումը, որն, ի վերջո, կբովանդակի «Սահմանադրականության գնահատման հետազոտական ծրագիրը»՝ իր որոշակի նպաստը բերելով երկրում սահմանադրականության հաստատման վեժ գործին։



Գծապատկեր 3. Սահմանադրականության գնահատման փուլային ընթացքը

Որպես դիսկրետ մոդելավորման կիրառություն՝ զուտ ցուցադրման նպատակով ներկայացնենք այնպիսի ցուցանիշի քանակական գնահատում ու երկրների համեմատություններում դրա դիտարկում, ինչպիսին սահմանադրականության կայունությունն է, որը

հաշվարկվել է հետևյալ ցուցիչների միջոցով. ընտրական գործընթաց, քաղաքացիական հասարակություն, անկախ լրատվամիջոց, ազգային դեմոկրատական կառավարում, տեղական դեմոկրատական կառավարում, անկախ դատական համակարգ, կոռուպցիա, դեմոկրատիայի աստիճան: Հաշվարկների արդյունքում երկրները դասակարգվել են ըստ սահմանադրականության կայունության նվազման՝ [-110;87] միջակայքում, հետևյալ կերպ¹.



Գծապատկեր 4. Սահմանադրականության կայունության ինդեքսային ցուցանիշներ

¹ Հ. Սարգսյան, Գ. Տոնոյան, Ն. Քոչինյան, Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում, Եր., 2015:

ГАЙК САРКИСЯН

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ СТОРОНЫ КОНСТИТУЦИОНАЛИЗМА СТРАНЫ

Ключевые слова: конституционализм, конституционная экономика, оценка, дискретное моделирование

Обсуждаются вопросы конституционной экономики, понятие конституционализма, рассматривается его социально-экономическое сечение. Целью публикации является указание оценки феноменального понятия “конституционализма” в первом приближении на условном примере, с помощью некоторых вспомогательных терминов дискретного моделирования.

HAYK SARGSYAN

SOCIO-ECONOMIC ASPECTS OF COUNTRY'S CONSTITUTIONALISM

Key Words: constitutionalism, constitutional economics, assessment, discrete modelling

Issues of constitutional economics, the concept of constitutionalism and its socio-economic cross section are discussed in the article. The aim of current publication is the assessment of the phenomenal concept of “constitutionalism” through presentation of some additional terms of discrete modelling, and their application coverage as the preliminary approximation based on hypothetical study consideration.



ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ. ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ՆՈՐԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնաբառեր. գիտելիք, նորաստեղծություն, տնտեսական զարգացում, տնտեսական աճի գործոններ, տնտեսական զարգացման գործոններ, տեխնոլոգիական փոփոխություններ, տեխնոլոգիական կլանող կարողություն

Հողվածում քննարկվում են տնտեսական աճի և տնտեսական զարգացման առանձնահատկությունները, գործոնները: Տնտեսական զարգացումը հանգեցնում է տնտեսության մեջ որակական և քանակական փոփոխությունների, իսկ աճը՝ միայն քանակական: Որպես տնտեսական զարգացման հիմնական գործոններ են դիտարկվում գիտելիքը և նորաստեղծությունները: Տնտեսական զարգացման համար պահանջվում է նոր գիտելիք, ինչը նորաստեղծությունների, հետևաբար՝ տեխնոլոգիական փոփոխությունների շարժիչ ուժն է: Նոր տեխնոլոգիայի հիմքում նոր գիտելիքն է, որի տարածմամբ մեծանում է այս կամ այն երկրի տեխնոլոգիական կլանող կարողությունը, ինչն էլ նպաստում է ստեղծված տեխնոլոգիաների արագ յուրացմանը:

Գիտելիքի և նորաստեղծությունների՝ որպես տնտեսական զարգացման գործոնների ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է որոշակի անդրադարձ անել տնտեսական զարգացման էությանը, քանի որ հաճախ տնտեսական աճը և տնտեսական զարգացումը նույնացվում են՝ անկախ տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունների բնույթից: Մինչդեռ աճի գործոնները տարբերվում են զարգացման գործոններից:

Տնտեսական շրջապտույտի տեսանկյունից տնտեսությունը նկարագրելու դեպքում խոսքը կարող է վերաբերել տարեցտարի, առանց էական փոփոխությունների (հնարավոր է՝ քանակական, բայց ոչ որակական), «նույն եղանակով» կրկնելու կամ «նույն բանը» արտադրելու մասին:

Ըստ Յո. Շումպետերի՝ տնտեսության մեջ կան փոփոխություններ, որոնք տեղի են ունենում ոչ անընդհատ, դուրս են գալիս սովորական շրջանակներից, փոխում սովորական ընթացքը և չեն կարող հասկացվել տնտեսական շրջապտույտի տեսանկյունից, թեպետ դրանք զուտ տնտեսական՝ «ներհամակարգային» բնույթի են, ինչպես օրինակ՝ փոստակառքերի դարաշրջանից երկաթուղիների դարաշրջանին անցումը¹: Կողք կողքի շարե-

¹ Шумпетер Й., Теория экономического развития. М., «Прогресс», 1982, с.152.

լով ցանկացած քանակի փոստակառքեր՝ միևնույն է, երկաթգիծ չի ստացվի, այսինքն՝ զարգացում չի լինի:

Տնտեսական զարգացումը, ամենից առաջ, նախկինում անհայտ որևէ նոր բանի (ըստ Շումպետերի բերած օրինակի՝ երկաթուղիների) առաջացումն է կամ, այլ խոսքով՝ նորաստեղծությունը: Վերջինս սահմանել է Յո. Շումպետերը¹ դեռևս 1911 թվականին՝ «Տնտեսական զարգացման տեսություն» դարակազմիկ աշխատության մեջ: Փաստացիորեն՝ տնտեսագիտության մեջ առաջինը Շումպետերն է սահմանազատել տնտեսական աճն ու տնտեսական զարգացումը:

Տնտեսական զարգացումը տնտեսության մեջ հանգեցնում է որակական և քանակական փոփոխությունների, իսկ աճը՝ միայն քանակական: Տնտեսական զարգացումն ավելի հարմար է զարգացող երկրների առաջընթացը և կյանքի որակը գնահատելու համար, իսկ աճը՝ զարգացած երկրներին: Այդուհանդերձ, վերջինս լայնորեն կիրառվում է բոլոր երկրներում, քանի որ աճը զարգացման անհրաժեշտ պայման է: Տնտեսական աճի գործոնը ՀՆԱ բաղադրիչներն են, դրանցից մեկի աստիճանական մեծացումը. սպառում, պետական ծախսեր, ներդրումներ, զուտ արտահանում:

Տնտեսական զարգացման համար պահանջվում է նոր գիտելիք, ինչը նորաստեղծությունների, հետևաբար՝ տեխնոլոգիական փոփոխությունների շարժիչ ուժն է, այն փոփոխությունների, որոնք «տեղի են ունենում ոչ անընդհատ, դուրս են գալիս սովորական շրջանակներից, փոխում սովորական ընթացքը»: Նոր տեխնոլոգիայի հիմքում նոր գիտելիքն է, որի տարածմամբ մեծանում է այս կամ այն երկրի, առանձին ընկերության տեխնոլոգիական կլանող կարողությունը, ինչն էլ նպաստում է ցանկացած վայրում ստեղծված տեխնոլոգիաների արագ յուրացմանը:

Յուրաքանչյուր ընկերության կենսունակ մրցակցային առավելությունները բխում են նոր գիտելիք ստեղծելու և օգտագործելու², նորաստեղծություն ներդնելու նրա կարողությունից³: Մրցակցությունն ավելի անկանխատեսելի է, երբ ուղղորդվում է նորաստեղծությամբ և ճկունությամբ, այլ ոչ՝ արդյունավետությամբ⁴: Միայն նորաստեղծությունն է կորպորացիաների մեծ մասին փրկում անհետացումից⁵: Համաշխարհային կոշտ մրցակցության հետևանքով ընկերություններն այլևս չեն կարող գոյատևել՝ հիմնվելով արդյունավետության վրա, արտադրելով ավելի շատ «միևնույն բանը»: Դրա փոխարեն ընկերությունները պետք է կենտրոնանան նորաստեղծության վրա և արտադրեն «ոչ նույն բանը»: Հարստությունը և բարգավաճումը կախված են հայտնագործելու, իրենց մրցակիցներից առաջ

¹ Նույն տեղում, էջ 159:

² Franken A., Braganza Organisational forms and knowledge management: one size fits all? // International Journal of Knowledge Management Studies, 2006, N 1 (1/2), p. 18–37.

³ Drucker P., Post Capitalist Society. New York: Butterworth Heineman, 1993.

⁴ Prahalad C., Ramaswamy V., The Co-Creation Connection // Strategy & Business, 2002.

⁵ Harris R., Buying and Selling in a Digital World // Journal of Strategy & Leadership, 2000, N 28 (5), p. 15–20.

անցնելու կարողությունից՝ պատասխանելով շուկայի պահանջներին և զարգացնելով հմտությունները կամ ստեղծելով նորերը, ինչպես պահանջում են տնտեսական տատանումներն ու անկումները¹: Ընկերության հարստության մեծ մասը առարկայացած է նրա ստեղծագործական ներուժի և տեղեկատվության մեջ², և ընդունված է, որ նորաստեղծությունն ընկերության տնտեսական ցուցանիշների առանցքային հասկացությունն է:

Համընդհանրացումը պահանջում է արմատապես վերանայել պատկերացումները նորաստեղծական գործընթացների և տեխնիկական լուծումների վերաբերյալ ինչպես համաշխարհային շուկաների, այնպես էլ, այդ շրջանակում՝ տարածաշրջանային որմնախորշերի համար³: Նորաստեղծությունն արագորեն դառնում է համաշխարհային մրցակցության, աշխատատեղերի ստեղծման և տնտեսական աճի առանցքային գործոն⁴: Նորաստեղծական գործընթացի համար համընդհանրացումը ստեղծում է ինչպես նոր հնարավորություններ, այնպես էլ մարտահրավերներ: Դա ենթադրում է առավելագույն արդյունավետությամբ տեղեկատվական-հեռահաղորդակցային տեխնոլոգիաների օգտագործում, շուկաների ընդլայնում, էլ ավելի մասնագիտացում և ավելի մեծ քանակի միջոցների հատկացում հետազոտությունների և մշակումների համար: Նորաստեղծական կազմակերպությունները պետք է ճշգրտեն և պարբերաբար նորացնեն իրենց արտադրանքը, ռազմավարական գործընթացները և կազմակերպական կառույցները՝ համապատասխանեցնելով դրանք ծախսերի, որակի, ճկունության և նորաստեղծականության բարձր և փոփոխվող պահանջներին⁵:

Հնարավորությունների ուսումնասիրության, հարմարեցման ընկերության կարողությունները կարևոր են սահմանափակ գիտելիքը հաջող նորաստեղծության վերափոխելու համար: Դա կախված է նաև գիտական հետազոտություններից, ընկերությունում ուսուցման կազմակերպումից, ինչպես նաև արտաքին գիտական և տեխնոլոգիական մշակումների պարբերական ուսումնասիրությունից և օգտագործումից⁶: Կրթությունը դարձել է հիմնական իշխանությունը, որի շուրջ պտտվում է ժամանակակից գործարար վերափոխումների կամ, լայն իմաստով՝ տնտեսական զարգացման այլ գործոնների մեծ մասը⁷:

¹ Hargreaves P., Teaching in the Knowledge Society / Vision 2020-Second International Online Conference. Technology Colleges Trust, 2002, p. 1-14.

² Smart B., Ritzer G., Handbook of Social Theory. London: Sage, 2001.

³ Li M.-S., Crave S. et al., Enterprise Interoperability Business Models and Value Analysis / ICS 2008: the 14th International Conference on Concurrent Enterprising. Lisbon, 2008.

⁴ Using Knowledge for Development in EU Accession Countries. Paris: World Bank, 2002.

⁵ Visscher K., Weerd-Nederhof P., Rise and fall of an innovative organization: the innovation journey of Ericsson Enschede // International Journal of Innovation Management, 2006, N 10 (3), p. 217-235.

⁶ Antonelli C., Localized technological change, new information technology and the knowledge-based economy: The European Evidence // Journal of Evolutionary Economics, 1998, N 8, p. 177-198.

⁷ Jirasek J., Two Approaches to Business Ethics // Journal of Business Ethics, 2003, N 47 (4), p. 343-347.

Այսպիսով՝ տնտեսական զարգացման գործոններն են՝ գիտելիքը և նորաստեղծությունները, որոնք ապահովվում են մարդկային կապիտալի աճով, անհավասարության կրճատմամբ, կառուցվածքային փոփոխություններով՝ բարելավելով ամբողջ բնակչության կյանքի որակը:

ГАГИК ВАРДАНЯН

ОСНОВЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ: ЗНАНИЯ И ИННОВАЦИИ

Ключевые слова: экономическое развитие, экономический рост, факторы экономического развития и экономического роста, знания, инновации, технологические изменения, технологическая поглощающая способность

В статье рассматриваются взаимосвязи экономического роста и экономического развития, факторы экономического развития. Экономическое развитие приводит к качественным и количественным изменениям в экономике, а рост – к количественным. Знания и инновации рассматриваются как факторы экономического развития. Для экономического развития требуются новые знания, что является двигателем инноваций, а следовательно, технологических изменений. В основе новых технологий – новые знания, с распространением которых увеличивается технологическая поглощающая способность той или иной страны, что и способствует освоению технологий, созданных в любом месте.

GAGIK VARDANYAN

BASES OF ECONOMIC DEVELOPMENT: KNOWLEDGE AND INNOVATIONS

Key Words: economic development, economic growth, factors of economic development and economic growth, knowledge, innovation, technological changes, technological absorbing capacity

Interrelations of economic growth and economic development, factors of economic development are considered in the article. Economic development leads to qualitative and quantitative changes in economy, and growth-to quantitative ones. Knowledge and innovations are considered to be factors of economic development. New knowledge is required for economic development as the engine of innovations and, consequently, technological changes. New knowledge underlies new technologies, the spread of which enhances this or that country's absorbing technological capacity promoting to mastering of technologies in any place.

